



*Շրջակա միջավայրի նախարարության  
«Հիդրոտեղեկատվության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

---

*ԱԳՐՈՇԵՐՆԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ*

*ՏԵՂԵԿԱԳԻՐ*

*2023*

---


*Օգոստոսի երրորդ տասնօրյակ*

*Տեղեկագիրը կազմել է ագրոտեղեկատվության բաժինը՝ մասնագիտացված ագրոտեղեկատվության կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:*

*Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան*

## ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Օգոստոսի երրորդ փասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում եղել է նորմայի սահմաններում մի փոքր դրական շեղումով:



Ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են 23-ին և 24-ին. Տավուշում գրանցվել է +31...+36°C Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +27...+31°C, նախալեռնային շրջաններում՝ +35...+37°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +35...+37°C, նախալեռնային շրջաններում՝ +28...+30°C, Շիրակում՝ +29...+32°C (Աշոցք՝ +26°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +26...+30°C, նախալեռնային շրջաններում՝ +31...+33°C, Գեղարքունիքում՝ +24...+28°C, Լոռիում՝ +27...+30°C, Արմավիրում՝ +34...+36°C, Արարատում՝ +35...+37°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +26...+28°C, նախալեռնային շրջաններում՝ +32...+36°C:


Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները Տավուշում գրանցվել է +15...+17°C (Դիլիջան՝ +9°C), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +6...+8°C, նախալեռնային շրջաններում՝ +15...+17°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +15...+17°C, նախալեռնային շրջաններում՝ +7...+11°C, Շիրակում՝ +6...+10°C (Աշոցք՝ +2°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +8...+11°C (Հանքավան՝ +4°C), նախալեռնային շրջաններում՝ +14...+16°C, Գեղարքունիքում՝ +6...+11°C, Լոռիում՝ +7...+12°C (Տաշիր՝ +5°C), Արմավիրում՝ +16...+18°C (Արմավիր՝ +12°C), Արարատում՝ +15...+17°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +4...+7°C, նախալեռնային շրջաններում՝ +14...+16°C:

### Տասնօրյակային տեղումներ




Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 5-7մմ (27-41%), Լոռիում՝ 7-19 մմ (44-122%), Տավուշում՝ 7-16մմ (57-130%), Արագածոտնում՝ 2-3(16-56%), Գեղարքունիքում՝ 0.4-1մմ (3-11%), Կոտայքում՝ 10-27մմ (94-238%), Արմավիրում՝ 0.8-2մմ (24-77%), Արարատում՝ 3մմ (72%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 6մմ (50%), նախալեռներում՝ 1մմ (26%), Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ 24-32մմ (221-649%), նախալեռներում՝ 2-23մմ (3-128%):

### Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը














Օգոստոսի երրորդ փասնօրյակում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները լեռնային շրջաններում գրանցվել են +2...+6°C, Արարատյան դաշտում, Տավուշի հովտային շրջաններում, Արագածոտնի նախալեռներում՝ +10...+15°C, Վայոց ձորի նախալեռներում, Սյունիքի հովտային շրջաններում՝ +12... +16°C աստիճան:

## Վեգետացիոն ցուցիչի արժեքն ըստ արբանյակային տվյալների (օգոստոսի երրորդ փասնօրյակ)



Բուսականության նորմալացված տարբերության ինդեքսը (NDVI) ֆոտոսինթետիկ ակտիվ կենսազանգվածի ցուցիչ է, որը ստացվում է համեմատելով կլանված տեսանելի կարմիր լույսի և արտացոլված ինֆրակարմիր լույսի քանակը: NDVI-ը սահմանում է  $-1.0$ -ից մինչև  $1.0$ , արժեքներ որտեղ բացասական արժեքները համնկնում են բուսազուրկ տարածքներին: Ելնելով LANDSAT 8 արբանյակի տվյալների տարածական վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ օգոստոսի երրորդ փասնօրյակում երաշտային պայմաններ դիտվել են Սյունիքի հովտային, Արագածոտնի նախալեռնային և Արարատյան դաշտի առանձին հատվածներում:

**Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ**



## Գյուղատնտեսական մշակաբույսեր



Տասնօրյակի ընթացքում հանրապետությունում շարունակվել է գյուղատնտեսական մշակաբույսերի հասունացումը և բերքահավաքը:

Առանձին լեռնային շրջաններում բազմամյա միջին ժամկետներին մոտ սկսվել է աշնանացան ցորենի նախացանքի աշխատանքները:

Նախալեռնային շրջաններում շարունակվել է բանջարանոցային մշակաբույսերի, պտղատուների և խաղողի հասունացումը, կատարվել է բերքահավաք:

Եղանակային պայմանները նպաստավոր են եղել պտղատուների և խաղողի մոտ շաքարային նյութերի կուտակման համար:

Հովտային շրջաններում կատարվել է ձմերուկի և սեխի բերքահավաք, առաջացել են առվույրի ծաղկաբույլերը: